

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐ ԳՈՐԾԱԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ-ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Համաձայն Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվելիք թմրամիջոցների կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց համար նախատեսված սոցիալական աջակցության և զբաղվածության 2010-2012 թվականների միջոցառումների ժամանակացույցի իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. – մարզի բժշկական կենտրոններում հաշվառվել են թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող 385 անձիք/Հրազդան 81, Աբովյան 153, Չարենցավան 32, Նարիք 119/ :

2.- Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների հետ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց բուժումներ ստանալու նպատակով 2010-2012 թվականներին յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ անցկացվել են քննարկումներ: Համայնքների ղեկավարների հետ անցկացվող խորհրդակցություններում առաջարկվել է սերտ համագործակցություն իրականացնել մարզի բժշկական կենտրոնների համապատասխան կաբինետների մասնագետների հետ: 2012 թվականի ընթացքում 37 թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործող անձիք ստացել են համապատասխան բուժում:

3. – 2010 թվականին <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրում ընդգրկվել են 7 անձ, 2011 թվականից ծրագրերը դադարեցվել են:

4,5. – 18 թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձիք ուղղորդվել են զբաղվածության տարածքային կենտրոններ գրանցվելու որպես աշխատանք փնտրողներ, որից 12-ը տեղավորվել են աշխատանքի:

6. – մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան մասնագետների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ յուրաքանչյուր եռամսյակ մարզի քաղաքային համայնքներում կազմակերպվել են սեմինար քննարկումներ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց բուժման, սոցիալական աջակցության և զբաղվածության ծրագրերում ընգրկելու համար: